ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԲԼԱԳՈԴԱՐՆՈՅԵ ՀԱՄԱՅՆՔԻ
2013-2016ԹԹ. ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

2013-2016ԹԹ.

Կազմեց՝ համայնքի ղեկավար ՄԵՐՈՒԺԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Քննարկվել և հաստատվել է Բլագոդարնոյե համայնքի ավագանու 2013թ-ի փետրվարի 15-ի նիստի թիվ 04-Ն որոշմամբ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի իրավիճակի գնահատում
2. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները
3. Առանձին բնագավառներում առաջնահերթ խնդիրների, ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում
4. Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում
5. Համայնքի զարգացման քառամյա ծրագրի հիմնական ցուցանիշները՝

Հավելված – 1. *Համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը*

Հավելված – 2. *Համայնքային ենթակայության կազմակերպությունների կառուցվածքը*

ԲԼԱԳՈԴԱՐՆՈՅԵ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ

Տեղական ինքնակառավարման մարմիններում արդյունավետ կառավարում իրականացնելու գլխավոր պայմաններից մեկը՝ գործունեության համաչափ ծրագրավորումն է գալիք ժամանակաշրջանի տարբեր հատվածներով: Սահմանափակ ֆինանսների արդյունավետ ծախսումը, նոր միջոցների ներգրավումը հարկերի հավաքագրմամբ, կնպաստեն համայնքի առաջնահերթ խնդիրների լուծմանը, բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:

Ռազմավարական քաղաքականության տեսանկյունից Բլագոդարնոյե համայնքի քառամյա ծրագրի հեռանկարային ուղղությունները հետևյալն են.

1. Գյուղատնտեսության զարգացման ծրագրերի իրականացում:

2. Մշակույթային համակարգի բարեփոխում,
   Կրթամարզամշակութային համալիրի գույքի ձեռք բերում:
3. Գերեզմանատան ճանապարհի բարեկարգում,կանգառների կառուցում, փողոցների լուսավորում
4. Գործազրկության կրճատում, աշխատատեղերի ստեղծում
5. Բնակչության իրավունքների պաշտպանություն
6. Կոմունալ ծառայությունների բարելավում

ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ԾԱՌԱՅԵԼՈՒ Է

ՀԵՏԵՎՅԱԼ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ

1. Գյուղատնտեսության զարգացմանը, գյուղատնտեսական արտադրանքի ավելացմանը
2. Բնակչության սպասարկման և կոմունալ ծառայությունների բարելավմանը
3. Բնակչության ֆոնդի ավելացմանը, բնակչության արտագաղթի պակասեցմանը
4. Նախադպրոցական, դպրոցական կրթության բարեփոխմանը, մշակութային, մարզական և սպորտային դաստիարակությանը
5. Տրանսպորտային սպասարկման բարելավմանը, փողոցների բարեկարգմանը
6. Համայնքում աղբահանության կազմակերպման և սանիտարահիգենիկ պայմանների ստեղծմանը:
7. Արտակարգ իրավիճակների վերացմանը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա 2013-2016թթ. ծարագրում ներառված են համայնքի հիմնական խնդիրները:

Համայնքային զարգացման քառամյա ծրագիրը հրապարակվում է համայնքի զարգացման ընդհանուր խնդիրների մասին պատկե-ռացում կազմելու, առաջիկա 4 տարում ռեալ ծրագրեր և բյուջե կազմելու, տեղական

ինքնակառավարման մարմնի գործողությունները կոորդինացնելու համար:

Ծրագրում ներկայացված են հետևյալ փաստաթղթերը.

1. գյուղապետի ուղերձը
2. Համայնքի մասին ընդհանուր տեղեկատվություն
* պատմական ակնարկ
* ժողովրդագրություն
* տեղական ինքնակառավարման մարմիններ
* կրթություն, մշակույթ, սպորտ
* բնակարանաշինություն, բնակարանային և կոմունալ տնտեսություն, ճանապարհներ
* հողօգտագործում, գյուղատնտեսություն, շրջակա միջավայրի պաշտպանություն
* տնտեսության զարգացում
* առողջապահություն, սոցիալական վիճակ
3. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները
4. Առաջնահերթ ծրագրերի կոնկրետ խնդիրների ձևակերպումը ըստ առանձին բնագավառների
5. Բյուջեի ֆինանսական ցուցանիշների վերլուծություն ըստ տարիների
6. Համայնքային սեփականություն հանդիսացող հիմնական միջոցների, գույքի առկայությունը
7. Հավելված գյուղապետարանի աշխատակազմի կառուցվածքի մասին
8. Հավելված գյուղապետարանի ենթակա կառույցների մասին

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԿԼԻՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Բլագոդարնոյե գյուղ Տաշիրի տարածաշրջանում, Սևաբերդ գետակի ձախ ափին, Տաշիր քաղաքից 10 կմ հարավ-արևմուտք, մարզկենտրոնից գտնվում է 62 կմ հեռավորության վրա: Գյուղը հիմնադրվել է1907-1908 թվականներին Կիրիլ ազգանունով մոլոկանի կողմից և այն

անվանվել է Կիրիլովկա: Հետագայում գյուղը անվանել են Բլագոդարնոյե: 1988թ-ի հայ-ադրբեջանական պատերազմների ժամանակ գյուղը վերաբնակեցվել է հայերով, մեծամասնութ հեռացել են, փախստականների թիվը կազմում է՝ 12:

Կլիման բարեխառն է, ձմեռը երկարատև ու ցրտաշունչ, ամառը զով: Գյուղի մասնագիտացման հիմնական ուղղությունը անասնապահությունն է: Զբաղվում են նաև մեղվաբուծությամբ:

Գյուղի վարչական տարածքը կազմում է 3615,6 հա, որից 2545,3 հա պետական սեփականության, վարելահողեր՝ 147,7 հա, խոտհարք՝ 511,1 հա, արոտավայր՝ 2611,5 հա և 195,2 հա այլ:

Ունի հիմնական դպրոց, բուժկետ, կապի հանգույց:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1.Համայնքի մշտական բնակչության ընդհանուր թիվը	215
. տղամարդ	103
. կին	112
. նախադպրոցական տարիքի (0-6 տարեկան)	31
. դպրոցական տարիքի (7-17 տարեկան)	41
. միջին տարիքի (18-60 տարեկան)	117
. 60 տարեկանից բարձր	25
. ընտանիքների թիվը	63
. գրանցված ընտրողների թիվը	184

Բնակչության սոցիալական կազմը

1. Կենսաթոշակառուներ, որոնցից		34
	հաշմանդամներ (1-ին, 2-րդ, 3-րդ խմբի)	11
	միակողմանի ծնողազուրկ երեխաներ	-
	երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	-
	մանկուց հաշմանդամ երեխաներ	-
	միայնակ կենսաթոշակառուներ	4
	զոհված ազատամարտիկների ընտանիքներ	1
2.	Պատերազմի մասնակիցներ, վետերաններ, որոնցից	-

	ՀՀ սահմանների պաշտպանության ժամանակ վիրավորված ազատամարտիկներ *((1-ին, 2-րդ, 3-րդ խմբի))*	–
3.	Փախստականներ *((մարդ))*	12
4.	Բռնադատվածներ	–
5.	Բազմազավակ ընտանիքներ *(3 և ավելի անչափահաս երեխա ունեցող)*	8
6.	Սոցիալական ծառայությունների Վանաձորի տարածքային գործակալության աղքատության ընտանեկան համակարգում հաշվառված ընտանիքների թիվը *(միջինը)*, այդ թվում՝	10
	ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը	10
	միանվագ դրամական օգնություն ստացողների թիվը *(միջինը)*	–

Աշխատունակ բնակչության թիվը կազմում է 215 մարդ, որոնցից վարձատրվող աշխատանքով զբաղված են 102 մարդ: Հիմնական մասը զբաղված է հողագործությամբ և անասնապահությամբ:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

2012թ. փետրվարի 12-ին 3-րդ անգամ համայնքի ղեկավար է վերընտրվել Մերուժան Արշալույսի Ավետիսյանը: Բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման, համայնքի հիմնախնդիրների լուծման համար Բլագոդարնոյե համայնքի ղեկավարը, համայնքի նորընտիր ավագանին իր 5 անդամներով նպատակաուղղված պետք է ծախսեն համայնքի բյուջեի ֆինանսական միջոցները: Անհրաժեշտության և հնարավորության դեպքում միջոցներ հայթայթելու պետբյուջեից, միջազգային և տեղական դոնոր կազմակերպություններից:

Գյուղապետարանի աշխատակազմն ունի հետևյալ կառուցվածքը.

գյուղապետի տեղակալ – 1 միավոր

աշխատակազմի քարտուղար – 1 միավոր

առաջատար մասնագետ – 1 միավոր

հավաքարար – 1 միավոր

Աշխատակազմի աշխատողների ընդհանուր թիվը՝ 4մարդ:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ

Կրթական համակարգը ներառում է 1 հիմնական դպրոց: Ընդհանուր հիմնական կրթությունն իրականացվում է Բլագոդարնոյեի հիմնական դպրոցում: Դպրոցը կոմֆետիկ վերանորոգվել է 2000 թ-ին: Դպրոցը համալրված է մասնագետ կադրերով, աշակերտների թիվը կազմում է 47, իսկ աշխատողներինը՝ 19, որից ուսուցիչ՝ 14: Դպրոցը ապահովված է հիմնական գույքով, սակայն համակարգիչների անբավարար քանակի պատճառով ինֆորմատիկայի դասերը ընթանում են ոչ լիարժեք: Դպրոցի ջեռուցումը կատարվում է էլեկտրոէներգիայով:

Դպրոցի ամենամեծ հիմնախնդիրներից մեկը սպորտդահլիճն է :

ԲՆԱԿԱՐԱՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ, ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ

Համայնքի բնակֆոնդը կազմում է 5475 քառակուսի մետր մակերես, 59 առանձնատուն : 1988-1990թթ Ադրբեջանի տարբեր վայրերից գաղթած փախստականները բնակություն են հաստատել Բլագոդարնոյե համայնքում, որոնց մի մասը հեռացել են համայնքից իսկ մնացածները համայնքի լիիրավ անդամ են :

Բլագոդարնոյե գյուղական համայնքը չունի աղբահանության կառույց: Համայնքային ենթակայության ճանապարհները մոտ 15 կմ են, որից՝ ասֆալտա-բետոնային՝ 1.6 կմ, խճից և կոպխճից՝ 12 կմ, բնահողային 1.4 կմ:

Համայնքով է անցնում Տաշիր-Կաթնառատ ուղևորատար երթուղին, օրը 2-ու անգամ, մեկ ուղևորի տոմսի արժեքը՝ 200 դրամ:

ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքի հողային տարածքը 3615.6 հա է, որից 2545.3 հա պետական սեփականության, գյուղատնտեսական նշանակության հողեր 3465.6, 29.6 հա բնակելի շինությունների տակ հողեր, 10.41 հա արդյունաբերության, տրանսպորտի և կապի, 5.24 հա հանքավայրերի հողեր, 99.38 հա անտառային և ջրային ֆոնդ: Բնակչությունը հիմնականում զբաղված է գյուղատնտեսական աշխատանքներով՝ մասնավորապես նաև անասնապահությամբ: Իսկ հիմնական զբաղմունքը անասնաբուծությունն է: Վառելանյութի թանկության, տեխնիկայի պակասի, ստացված բերքի անեկամտաբերության պատճառով վարելահողերը վեր են ածվել խոտհարքների: Հիմնականում օգտագործվում են արոտավայրերը և խոտհարքները: Վարելահողերը բերրի չեն, իսկ խոտհարքները հեռագնա են, Չօգտագործելու պատրվակով էլ բնակիչների որոշ մասը հրաժարվում են հողի հարկի մուծումներից, որը պատճառ է սեփական եկամուտների հավաքագրման ցածր տոկոսի և ապառքների առաջացմանը: Անասնաբուծության հիմնական ճյուղը խոշոր եղջերավորներն են՝ 557 գլուխ, որից՝ կովեր 303 գլուխ, , երինջ-141, արտադրող ցուլեր-32 և 81 գլուխ՝ մանր եղջերավորներ: 2013թ. հաշվառմամբ խոզերի թիվը կազմում է 57 գլուխ:
Համայնքի մեղվաընտանիքների թիվը 111 փեթակ , թռչունների թիվը՝ 336:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԻՃԱԿ

Համայնքում գործում է բուժկետը: Հիմնական մասնաշենք չունենալու պատճառով բուժկետին անհատույց հատկացվել է գյուղապետարանի ասնաշենքից:: Բուժ օգնությունը անվճար է:

Աննկարագրելի ցածր է բնակչության սոցիալական վիճակը: Միակ զբաղմունք գյուղատնտեսությունը, անասնաբուծությունը անեկամտաբեր է: Աղքատության տոկոսը կազմում է ընդհանուր բնակչության 40%-ից ավելին: Բարձր է գործազրկությունը, որոշակի գումար համայնքի ընտանիքների բյուջեն համալրում են արտագնա աշխատանքներից: Ցածր է գրագիտության

տոկոսը: Վարձատրվող աշխատանքով ապահովված են մոտ 26 մարդ, հիմնականում 19 կրթության, 4 տեղական ինքնակառավարման մարմիններում, ենթակա կազմակերպություններում, 4 սպասարկման ոլորտում: Սոցիալական նպաստների համակարգում ընդգրկված են 10 ընտանիքներ, մինչդեռ համակարգի անկատարության պատճառով շատերը զրկված են օգնությունից: "Փարոս" համակարգում ընդգրկվելու պատճառով մարդիկ հրաժարվում են հողամասերից և անասնապահությունից, որի արդյունքում ցածր է գյուղատնտեսության մակարդակը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 14.03.1997թ. թիվ 51 որոշմամբ, ինչպես նաև դրանից հետո ձեռք բերված գույքով՝ հետևյալ արտահայտությամբ.

* գյուղապետարանի շենք – 1 միավոր՝ բարվոք
* գերեզմանատուն – 1 միավոր
* համայնքային կենտրոն – 1 միավոր՝ կիսանորոգված
* մշակույթի շենք(գ/պ շենքում) – 1 միավոր՝ բարվոք
* ՄՏԶ 82Մ – 1 միավոր՝ նորմալ վիճակում

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳ ՍՊԱՌՆՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

* բնակչության անապահովության, հողերի օգտագործման անարդյունավետության, ինչպես նաև համայնքից երկարատև բացակայության պատճառով չեն կատարվում հարկային պարտականությունները՝ հիմնականում հողային
* արտագնա աշխատանքը և բնակչության արտահոսքը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

* համայնքի պահուստային հողերի, արոտավայրերի և պետական սեփականության հողերի առկայությունը
* համայնքում հեռախոսակապը նորմալ է և միջին որակի
* գործող առևտրական օբյեկտները հիմնականում բավարարում են բնակչության պարենային պահանջները
* բարեխառն եղանակը և առկա արոտավայրերը հիմք են անասնաբուծության զարգացման

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

* զբաղվածության ցածր մակարդակը, աշխատատեղերի պակասը
* բնակչության 40 %-ը սոցիալապես անապահով են, համայնքում բարձր է արտերկիր արտագաղթը
* գյուղատնտեսական տեխնիկայի բացակայությունը, որը ազդում է գյուղատնտեսության զարգացման վրա

3. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Համայնքի ղեկավարը, ավագանին հաշվի առնելով բնակչության պահանջները, սահմանում են զարգացման հետևյալ ռազմավա-րությունը՝ համայնքը դարձնել բարեկարգ, բարելավել ազգա-բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները, օժանդակել գյուղատն-տեսական արտադրության ավելացմանը: Առաջիկա 4 տարում համայնքի հիմնական նպատակային խնդիրներն են.

* մարզամշակութային համալիրի համար գույքի և համապատասխան պարագաների ձեռք բերում
* գյուղատնտեսության զարգացման ծրագրերի իրականացում
* սպորտ դահլիճի վերանորոգում և ջեռուցման խնդրի լուծում
* կանգառների կառուցում
* համայնքի ամբողջական գազաֆիկացում
* փողոցների գիշերային լուսավորության լիովին ապահովում
* գերեզմանատան ճանապարհի վերանորոգում

* աջակցություն մանր և միջին բիզնեսի զարգացմանը
* ֆուտբոլի և վոսկետբոլի դաշտի վերանորոգում
* մարզամշակութային համալիրին կից նոր խմբակների ստեղծում
* անհրաժեշտության դեպքում համայնքային սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների օտարում

4. ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ ԿՈՆԿՐԵՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ

ԾՐԱԳԻՐ 1

ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՀԱՄԱՐ ԳՈՒՅՔԻ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ

Նկարագիրը –Շենքն ունի կոմունալ բոլոր հարմարություններ, վերանորոգված է: Կրթամարզամշակութային համալիրի կատարյալ գործունեության համար անհրաժեշտ է մասնաշենքը կահավորել համապատասխան գույքով և սարքավորումներով::

Նպատակը – Իրականացնելով այս ծրագիրը համայնքը կունենա բոլոր պահանջներին համապատասխան կրթամարզամշակութային համալիր, որտեղ կգործեն պարի, երգի, շախմատի, նկարչության, թատերական և այլ խմբակներ: Այն կնպաստի համայնքի մշակութային կյանքի զարգացմանը:

Խնդիրը – Որպեսզի կատարվի այս աշխատանքը և տրվի նշված խնդրին լուծում, անհրաժեշտ է մոտ 1 մլն. դրամ: Նախատեսվում է ձեռք բերել բարեգործական կամ միջազգային կազմակերպություններից:

արդյունքները – Շահառու կարող է համարվել ողջ համայնքը, երեխաները կարող են սովորել համալիրում գործող խմբակներում, իսկ ողջ համայնքը կարող է մասնակցել այնտեղ կազմակերպված միջոցառումներին:

ԾՐԱԳԻՐ 2

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Նկարագիրը – Լոռու մարզի Բլագոդարնոյե համայնքում գյուղատնտեսությունը միջ զարգացած է, վարելահողերը չմշակվելու պատճառով վեր են ածվել խոտհարքների, իսկ արոտավայրերը հեռագնա են: Գուղատնտեսությունը և անասնապահությունը համայնքում համարվում է միջին եկամտաբեր:

Նպատակը –համայնքում ստեղծել կոլեկտիվ, որի արդյունավետ աշխատանքի շնորհիվ (վարելահողերի կոլեկտիվ մշակման, արոտավայրերի ճիշտ օգտագործման, դաշտամիջյան ճանապարհների վերանորոգման, կաթնամթերքի վերամշակման գործարանի ստեղծման) համայնքում կզարգանա անասնապահությունը և հողագործությունը

Խնդիրը – Ծրագրը նախատեսվում է իրականացնել համայնքի բնակիչների ներդրումների միջոցներով: Ծրագրի նախնական արժեքը կկազմի մոտ 10 մլն. դրամ:

Արդյունքները – Ծրագիրն իրականացնելուց հետո համայնքում կզարգանա գյուղատնտեսությունը, որը կնպաստի նաև աշխատատեղերի ստեղծմանը, արտագաղթի նվազեցմանը, բնակիչների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:

ԾՐԱԳԻՐ 3

ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

Նկարագիրը – Համայնքը ունի փակ գերեզմանատուն 1.0 հա տարածքով Գերեզմանատունն արդեն գործում է, սակայն ճանապարհը դժվարանցանելի է հատկապես ձմռան ամիսներին:

Նպատակը –

- բարեկարգել գերեզմանատան ճանապարհը՝ հնարավորության դեպքում ասֆալտապատել
- ապահովել շիրիմների պահպանությունը և մաքրությունը
- ճանապարհի բարեկարգումը կնպաստի նաև բյուջեի մուտքերի այլ եկամուտների բարձրացմանը

Խնդիրը –

* կազմել նախագծա-նախահաշվային փաստաթղթեր
* ֆինանսավորման աղբյուր ընտրել պետբյուջեից սուբվենցիան կամ դոնոր կազմակերպություն, ծրագրի արժեքը կկազմի 2 մլն. դրամ:

արդյունքները –

* համայնքը կունենա նորմալ գերեզմանատուն, բարեկարգ ճանապարհով

ԾՐԱԳԻՐ 4

Համայնքի գազաֆիկացու

Նկարագիրը – Համայնքը ունի 1 փողոց և 2-ու նրբանցք,սակայն գազաֆիկացված չէ.

Նպատակը –ներգրավել դոնոր կազմակերպություններին, Հայռուսգազարդին անհրաժեշտ աշխատանքների և գումարը ապահովելու համար:

Խնդիրը – բնակչությունը կապահովվի բնական գազով, ինչը կթեթևացնի վառելիքի պակասությունը:

արդյունքները – կբարձրանա բնակչության կենսամակարդակը:

ԲԼԱԳՈԴԱՐՆՈՅԵ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ՀՀ	Ցուցանիշները	Չափի միավոր	2011թ. փաստ.	2012թ. փաստ.	2013թ. փաստ.	2014թ. փաստ.	2015թ. կանխ.	2016թ. կանխ.
1	2	3	4	5	6	7	8	9
1	Համայնքի վարչական տարածքը	հա	3615,6	3615,6	3615,6	3615,6	3615,6	3615,6
2	Բնակչության թիվը	մարդ	238	215	220	220	220	220
3	Ծնունդը	մարդ	1	5	6	7	7	7
4	Մահացությունը	մարդ	8	2	-	-	-	-
5	Աշխատանքային ռեսուրսները՝ այդ թվում	մարդ	-	-	-	-	-	-
5.1	զբաղվածության թիվը	մարդ	145	102				
5.2	գործազուրկներ	մարդ	93					
6	Գործազրության մակարդակը	տոկոս	60	60	50	50	40	40
7	Առևտրի և հաս. սննդի օբյեկտների թիվը՝ այդ թվում	հատ	4	4	5	5	5	5
7.1	առևտրի օբյեկտներ	հատ	2	2	-	-	-	-
8	Համայնքի գյուղատնտ. նշանակության հողեր	հա	3465,67	3465,67	3465,67	3465,67	3465,67	3465,67
8.1	սեփականաշնորհված հողեր	հա	376,9	376,9	376,9	376,9	376,9	376,9
8.2	համայնքային սեփականության հողեր	հա	650,12	650,12	650,12	650,12	650,12	650,12
8.3	համ. սեփական. հողերի օգտագործման մակարդակը	տոկոս	40	60	80	80	80	80
9	Ճանապարհների և փողոցների երկարությունը	կմ	2	2	2	2	2	2
10	Բարեկարգված փող. և ճանապարհն. երկարությունը	կմ	1	1	1	1	1	1
11	Ընդհանուր բնակարանային ֆոնդը	հազ. քմ	5475	5475	5475	5475	5475	5475
12	Բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը	հատ						
13	Նախադպրոցական հիմնարկների և սաների թիվը	հատ/մարդ	-	-	-	-	-	-
14	Հանրակրթ. դպրոց.-ի թիվը և նրանցում սովոր. թիվը	հատ/մարդ	1/40	1/47	1/50	1/50	1/50	1/60
15	Գյուղապետարանում աշխատողների թիվը	մարդ	5	4	5	5	5	5
16	Խմելու ջրի ներքին ցանցի երկարությունը	կմ	2	2	2	2	2	2

ԲԼԱԳՈԴԱՐՆՈՅԵ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄՈՒՏՔԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Հ/Հ	Եկամտի տեսակը	2011թ. փաստ.	2012թ. փաստ.	2013թ. փաստ.	2014թ. կանխ.	2015թ. կանխ.	2016թ. կանխ.
	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ	6197,1	6054,7	7732,9	8077,9	8427,9	8707,9
1	Հարկային եկամուտներ՝ ընդամենը	2697,1	2554,7	2819,7	2877,9	2877,9	2907,9
1.1	Հողի հարկ	1333,0	1647,9	2527,9	2527,9	2527,9	2527,9
1.2	Գույքահարկ	177,9	151,6	251,8	300,0	300,0	320,0
1.3	Տեղական տուրքեր	-	22,0	40,0	50,0	50,0	60,0
2	Ոչ հարկային եկամուտներ	496,0	733,1	1413,2	1500,0	1700,0	1800,0
2.1	Հողի վարձավճարներ	496,0	675,0	1413,2	1500,0	1700,0	1800,0
2.2	Այլ ոչ հարկային եկամուտներ	-	58,1				
3	Դոտացիա (ֆինանսական համահարթեցում)	3500,0	3500,0	3500,0	3700,0	3850,0	4000,0

հավելված 1

ԲԼԱԳՈԴԱՐՆՈՅԵ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ